# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Իջևանի համայնքի ավագանու 2014թ. մարտի 10-ին կայացած նիստի

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ս.Մանուկյան
քարտուղար՝ Բ.Թանանյան

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ՝ Հովիկ Խեչյանը, Արտակ Խաչատրյանը, Էմիլ Վարդապետյանը, Սամվել Չիբուխչյանը, Վահե Ղալումյանը, Գրիգոր Դանիելյանը:

Նիստին հրավիրված և մասնակցում էին լրատվական միջոցների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի աշխատակիցներ, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներ, բնակիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*10 մարտի 2014թ. N 5*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքային սեփականություն հանդիսացող Բլբուլյան փողոցի թիվ 103 շենքի թիվ 2 բնակարանը անհատույց օտարելու մասին
2. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին
3. Համայնքի 2014թ բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*10 մարտի 2014թ. N 6*

1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ103 ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 103 շենքի թիվ 2 բնակարանը հանդիսանում է համայնքային սեփականություն:
Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանում հաշվառված է և կարգապահ վարձակալ է հանդիսանում Լարիսա Գեորգիի Դոլյանը, որը ժամանակին չի կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 103 շենքի թիվ 2 բնակարանը, որը հանդիսանում է համայնքային սեփականություն, անհատույց օտարել Լարիսա Գեորգիի Դոլյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՐԻԽՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*10 մարտի 2014թ. N 7*

## 2. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի

| ՀՀ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Վասիլյան փ. | 41.8 հող/41.8 շին. |
| 2 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ տնտեսական շինություն/ | Բլբուլյան փ. | 29.2 հող/48.86 շին. |
| 3 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Գանինի փ. | 16.3 հող/16.3 շին. |
| 4 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 57.8 հող/57.8 շին. |
| 5 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Աբովյան փ. | 42.0 հող/42.0 շին. |
| 6 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Սպանդարյան փ. | 24.0 հող/24.0 շին. |
| 7 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 23.8 հող/23.8 շին. |
| 8 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ խանութ/ | Երևանյան փ. | 23.0 հող/23.0 շին. |
| 9 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Բլբուլյան փ. | 39.0 հող/32.62 շին. |
| 10 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան փ. | 22.1 հող/22.1 շին. |
| 11 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան փ. | 26.6 հող/26.6 շին. |
| 12 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Սպանդարյան փ. | 40.1 հող/40.1 շին. |
| 13 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ բնակելի տուն/ | Սպանդարյան փ. | 37.2 հող/66.47 շին. |
| 14 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 44.1 հող/44.1 շին. |
| 15 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ բնակելի տուն/ | Աբովյան փ. | 41.87 հող/71.8 շին. |
| 16 | Արտադրական /ինքնակամ արտադրամաս/ | Բլբուլյան փ. | 295.0 հող/218.86 շին. |
| 17 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Մետաղագործների փ. | 83.9 հող/40.5 շին. |
| 18 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Երևանյան փ. | 11.4 հող/42.8 շին. |
| 19 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Երևանյան փ. | 25.0 հող/25.0 շին. |
| 20 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության փ. | 55.8 հող/40.3 շին. |
| 21 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ առևտրի սրահ/ | Երևանյան փ. | 17.4 հող/10.4 շին. |
| 22 | Հասարակական կառուցապատում /ինքնակամ արհեստանոց/ | Բլբուլյան փ. | 1500.0 հող/231.12 շին. |
| 23 | Հասարակական կառուցապատում /ընդլայնում/ | Երևանյան փ. | 42.0 |
| 23 | Բնակելի կառուցապատում | Իջևանյան փ. | 63.32 |
| 24 | Բնակելի կառուցապատում | Նար-Դոսի փ. | 905.7 |
| 25 | Բնակելի կառուցապատում | Վասիլյան փ. | 350.0 |
| 26 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 793.5 |
| 27 | Բնակելի կառուցապատում | Թավրիզյան փ | 3860.2 |
| 28 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 188.7 |
| 29 | Բնակելի կառուցապատում | Մայիսի 28-ի փ. | 98.2 |
| 30 | Բնակելի կառուցապատում | Ալանյան փ. | 253.1 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Տ Ա Վ Ո Ւ Շ Ի   Մ Ա Ր Զ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
Ո Ր Ո Շ Ու Մ
*10 մարտի 2014թ. N 8*

3. ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի 2014թ բյուջեի համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել բյուջեի վարչական մասում կատարել 790,0 հազար դրամի վերաբաշխումներ:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով ,,Բյուջետային համակարգի մասին'' ՀՀ օրենքիւ 33 հոդվածի 3 կետով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է***

1.Ելնելով անհրաժեշտությունից պահուստային ֆոնդի 2-րդ եռամսյակի գումարներից 790,0 հազար դրամ տեղափոխել առաջին եռամսյակ և հատկացնել 4212 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ` ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ